Կուր գետովը գնալ Երասխ և երկուսի ծովը թափուած տեղից՝ ծովեզերքովը գնալով հասնել Դարբանդ քաղաքը և այն տեղից՝ պատմութեան մէջ նշանաւոր պարսպովը լեռների և ձորերի վրայով անցնելով՝ գնալ դէպի արեւմուտք և հասնել մինչեւ Ալազան գետը՝ որ թափվում է հիւսիսից Կուր գետը. բայց աւելի յարմար է հիւսիսից Սամուր գետը և Կովկասի հարաւային վերջին լեռնաշղթայն սկսած Ղուբայից և Շամախւոյ գաւառի լեռնամասերով գնալով և Դէօրչայի գաւառի լեռնամասերն անցնելով հասնել մինչեւ Նուխի գաւառի արեւմտեան վերջնամասը և մինչեւ Զակաթալայ քաղաքը. ուրեմն մի փոքր աշխարհ՝ կէսը լեռնային և կէսը դաշտային՝ այն է Հայաստանի Արարատեան կամ Վասպուրական նահանգների չափ։

Աղուանից աշխարհի գաւառաց համար գրէ Ղեւոնդ պատմիչ. Գլ ԼԱ. յերես 131։

«Եւ մինչդեռ ունէր զհրամանատարութեան իշխանութիւնն Եզիա՝ յղէր զեսպան առ արքայն հիւսիսոյ, որում Խաքանն կոչէին, և խնդրէր առնել խնամութիւն ընդ նմա և հաւանեալ արքայն Խազրաց՝ տայր նմա զքոյր իւր Խաթուն. բայց խաթունն յետ սակաւուց վաղճանէր, և համարեցան իբրեւ դաւով եղեալ։ Եւ (խաքանն) դումարեալ զօր բազում տայր ի ձեռս զօրավարի միոջ՝ որ կոչէր Ռաժթարխան ի գնդէն Խաթիրլիթբերայ. և առաքէր ի վերայ աշխարհիս՝ որ ընդ ձեռամբ Եզդի, որոց սփռեալ զասպատակս իւրեանց ըստ հիւսիսոյ գետոյն հրզօրադունի՝ որ կոչի Կուր, առնուին բազում գաւառս՝ զՀէզար, զԲաղա, զՈստանի, զՄարզպանեան, զՀաբանդ, զԳեղաւու, զՇաքէ, զԲեխ, զԼենի, զԿամբեխճան, զԽոզմազ։ Այս գաւառք, աշխարհին Աղուանից։ Առին և զյանկալի դաշտն Բաղասական, յորում անթիւ բազմութիւն հօտից և Նախիրքանդէոց բազմաց, զոր առին յաւարի"։

Գաւառք, քաղաքք, և գիւղք, Աղուանից աշխարհի մեծաւ մասամբ անուանեալ են յանուն թագաւորաց և իշխանաց Աղուանից, զօր. Ջվանշիր, Ջաւատ, Ջհանկիր, Ջումշուտ, Ուռնայր, Վաչագան, որպէս և Հայաստանեայցն։

Ձիրուանի աշխարհի վերին մասն լեռնային է, իսկ ստո-